

ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Շնորհավորում եմ Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք ընտրվելու կապակցությամբ:

Հուսով եմ, որ Ձեր գործունեությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահին կնպաստի մեր բարեկամ հայ ժողովրդի համախմբմանը, Հայկական անկախ պետության տնտեսության վերածննդին և Կովկասում խաղաղության հաստատման գործին:

Խորին հարգանքներով՝

ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱ
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Կիև, 21 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձերդ Սրբություն.

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ, հոգևոր բարձրագույն աստիճանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով, ինչը անվիճելի վկայությունն է Ձեր հոգևոր հեղինակության, որ Դուք ձեռք եք բերել աստվածահաճո ասպարեզում:

Հնագույն Հայկական Առաքելական Եկեղեցին միշտ օգնել է ժողովրդին պատվով դիմագրավել ամենածանր փորձություններին, ծառայել է նրա

համախմբվածությանը, օժանդակել է մշակույթի զարգացմանը, պահպանել է ազգի Ոգին և Հավատը:

Հայաստանի և Վրաստանի հավատակից ժողովուրդները, որոնց եղբայրությունը սկիզբ է առնում առասպելական ժամանակներից, միշտ կանգնած են եղել կողք-կողքի և դժբախտության պահին նեցուկ հանդիսացել միմյանց: Թող Հավատի սուրբ անհրաժեշտությունը և պատմական ընդհանուր ավանդույթները մեր հոգևոր և աշխարհիկ գործերում այսուհետև էլ լուսավորեն միասնության և փոխօգնության օրինյալ գաղափարը:

Խորին հարգանք՝

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ

9 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Էջմիածին—Հայաստան

Ձեր ընտրությունը, որպես Հայ Առաքելական Եկեղեցու գահակալ, ապացույց է Ձեր մարդկային արժանիքների, ինչպես նաև Ձեր բարոյական և հոգևոր բարձր հատկությունների նկատմամբ դրսևորված վստահության՝ առաջնորդելու համար հայ հավատացյալների մեծ համայնքը:

Լիբանանյան ժողովրդի անունից և անձամբ իմ անունից հղում եմ Ձեզ իմ ջերմ շնորհավորանքները և հաջողության մաղթանքները Ձեր առաքելության ճանապարհին:

ԷԼԻԱՍ ՀՐԱՌԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Բեյրութ, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԳՈՒԹ ԵՎ ԳԹԱԾ ԱՍՏԾՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ցանկանում եմ սրտի խորքից հղել Ձեզ իմ շնորհավորանքը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ:

Հոգևոր արժեքները և կապը Բարձրյալ Աստծո հետ հիմքն են մարդու վեհ զգացման, Աստծուն մոտենալը գերագույն վեհություն է, և այս ուղղությամբ հավատացյալներին առաջնորդելը հոգևոր շատ պատասխանատու պարտականություն է, որ հանձնված է կրոնական պետերին;

Հուսով եմ, որ Ձեր առաջնորդությամբ և Ձեր տված բարի խորհուրդներով հոգևոր և մշակութային կապերը երկու բարեկամ և հարևան ժողովուրդների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև, կամրապնդվեն ավելի, քան անցյալում:

Հայցում եմ Բարձրյալ Աստծուց քաջառողջություն և երջանկություն Ձեզ և փառք ու բարօրություն հայության համար:

ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Թեհրան, 9 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Անկեղծորեն և բարի զգացումներով շնորհավորում ենք Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր հավատացյալների Հովվապետի սուրբ պաշտոնին ընտրվելու առիթով:

Դարերի ընթացքում գոյություն է ունեցել հոգևոր սերտ կապ մեր ժողովուրդների միջև, որոնց համար քրիստոնեության ընդունումը դարձավ կարևորագույն պատմական իրադարձություն: Հույս եմ հայտնում, Ձերդ Սրբություն, որ Հովվապետական բարձր պաշտոնին Ձեր կոչվելով այդ հոգևոր կապը չի թուլանա, այլ առավել ևս կամրանա:

Ցանկանում եմ Ձեզ լիակատար հաջողություն Ձեր առաջիկա աշխատանքներում՝ ի բարօրություն ձեր Եկեղեցու և հասարակության, հանուն մեր ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման և փոխշահավետ համագործակցության:

ԻՎԱՆ ՌԻԲԿԻՆ
ՌԴ ՊԵՏԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ կաթողիկոսական գահակալության և ի փառս Աստծո, հանուն խաղաղության և Հայաստանյայց Եկեղեցու ու Հա-

յաստանի ժողովրդի բարգավաճման Ձեր ծառայությունն սկսելու առթիվ:

Անկեղծորեն մաղթում եմ Ձեզ մեծ հաջողություններ Ձեր ազնիվ, անձնվեր գործունեության մեջ:

Խորին հարգանքով՝

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՎԼԱԴԻՄԻՐ ՇՈՒՄԵՅԿՈ

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Մեծապես ուրախացանք Ձեր ընտրությամբ, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի Աթոռին ի Հայաստան:

Անձնապես և հանուն Լիբանանի Երեպիսկոպոսական ժողովի, Ձերդ Սրբությանն ենք ներկայացնում Մեր բարի ցանկությունները՝ հայ ժողովրդին մաղթելով առաջադիմություն Ձեր գահակալության ներքո: Հավաստիացնում ենք Ձեզ լիբանանցի և հայ ժողովուրդների բարեկամական սերտ հարաբերությունների ամրապնդման մասին:

ՆԵԲԻՀ ԲԸՐՐԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Բեյրութ, 8 ապրիլի 1955 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մեծագույն հաճույքով շնորհավորում եմ Ձեզ Ազգային-Եկեղեցական Ժողովի ընտրությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխանատու պաշտոնն ստանձնելու առթիվ:

Հայ համայնքի հոգևոր բարգավաճմանը երկար տարիներ Ձեր նվիրվածությունը հանգեցրեց հավատի այս արտահայտությանը Ձեր միաբանության կողմից: Ընտրելով Ձեզ այս բարձր պաշտոնին, համազգային ժողովը ճանաչեց անհրաժեշտությունն այն աշխատանքի, որ Դուք կատարելու եք ի նպաստ Եկեղեցու, և ես վստահ եմ, որ ձեր ողջ համայնքը կզորանա

և կքաջալերվի Ձեր պաշտոնավարությամբ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ընդունեցեք իմ լավագույն մաղթանքները:

ԺԱՆ ԿՐԵՏԻԵՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ապրիլ 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ձեր ընտրության առթիվ, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պետ, ցանկանում եմ ուղղել Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները՝ մաղթելով բարեհաջող ծառայություն Ձեր ժողովրդին և ամբողջ մարդկությանը:

Վստահ եմ, որ Ձեր ընտրությունը կնպաստի Հայաստանի և Լիբանանի հարաբերությունների էլ ավելի սերտացմանն ու զորացմանը:

Ձերդ Սրբություն, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Անկեղծորեն՝

ՌԱՖԻԿ ՀԱՐԻՐԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Բեյրութ, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Քրիստոսի Հարության ուրախալի և լուսավոր տոնի օրը վրաց ժողովրդի և իմ անունից ուղղում եմ Ձեզ սրտագին շնորհավորանքներ՝ մաղթելով երջանկություն, առողջություն և լիակատար հաջողություն Ձեր ապտվածահաճո գործունեության մեջ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհավորել Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հարգանքներով՝

ՕԹԱՐ ՊԱՑԱՑԻԱ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Թբիլիսի, 23 ապրիլի 1995 թ.

* * *

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կը շնորհաւորեմ Ձեզ, որ 4 Ապրիլ 1995 թուի ընտրութեան՝ բովանդակ աշխարհի Հայ հաւաքականութեան վստահութեան արժանացած և ընտրուած էք Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Կը հաւատամ, որ Ձեր նոր պաշտօնին մէջ, Ձեր առաջարկ և մաղթանքները պիտի չզլանաք շրջանի հանդուրժողութեան, հանգիստի և բարօրութեան կարօտ ժողովուրդներէն, որպէսզի անոնք հասնին իրենց որոնած սիրոյ, եղբայրութեան և խաղաղութեան: Կը շնորհաւորեմ Ձեզ:

ՄԷՀՄԷՏ ՆՈՒՐԻ ԵԼԼՄԱԶ
ԿՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱԳԱՀ

29 Մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հղում եմ սրտագին շնորհավորանքներս Հայ Առաքելական Ազգային Եկեղեցու Հոգևոր Պետի գահին Ձեր ընտրության առթիվ:

Այս սուրբ առիթով իմ տիկինը՝ Էլիզաբեթը, և ես միանում ենք աշխարհով մեկ Ձեզ ուղղված բարի ցանկություններին՝ աղոթելով և մաղթելով, որ Աստված Ձեզ շնորհի քաջառողջություն և հաջողություն՝ քրիստոնեական Եկեղեցու միությանը նպաստող Ձեր առաջնորդության ճանապարհին:

Անկեղծորեն՝

ՌՈԲԵՐՏ ԴՈԼ
ԱՄՆ ՍԵՆԱՏԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ

5 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Գրում եմ անձնապես իմ և «Միջազգային Քրիստոնեական Համերաշխություն» կազմակերպության անունից՝ բերելու Ձեզ իմ ջերմ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոս:

Ցավում եմ այս շնորհավորանքների և բարեմաղթությունների ուշացման համար: Ձեր ընտրությունը զուգադիպեց Չինաստան իմ այցելության օրերին, և ես միայն վերջերս տեղեկացա ընտրության արդյունքի մասին:

Հայաստանի ժողովուրդը տևապես մեր աղոթքների մեջ է եղել այս կարևոր իրադարձության առթիվ: Ես ուզում եմ վստահեցնել Ձեզ, որ մեր աղոթքները շարունակվում են նաև այժմ, երբ Դուք կանգնած եք նոր պատասխանատվությունների առաջ, որոնք առնչված են Ձեր սուրբ ծառայությանը:

Օգտագործում եմ այս առիթը՝ Ձեզ ներկայացնելու իմ խոր ակնածանքի ու սիրո զգացումները ձեր Եկեղեցու և այն բազում քրիստոնյա հայերի հանդեպ, որոնց հանդիպելու առանձնաշնորհումն ունեցա Արցախում՝ մռայլ և դժվարին օրերին: Մեր մեջ մեծացավ հիացումը նրանց հավատի, արիության, բազում շնորհների վեհանձնության, նրանց քրիստոնեական սիրո ներշնչող վկայության հանդեպ, նույնիսկ երբ նրանք կանգնած էին մեծ տառապանքների առաջ: Ամեն անգամ, երբ ես առիթ եմ ունենում խոսելու նրանց մասին այլ երկրների քրիստոնյա լայն հասարակության առջև, գտնում եմ, որ նրանց վկայությունը ներշնչում է ոչ միայն ինձ, որ առանձնաշնորհումն եմ ունեցել հանդիպելու նրանց, այլ նաև ուրիշներին, որոնց ուղղել եմ իմ խոսքը:

Գիտեմ, որ Միջազգային Քրիստոնեական Համերաշխության իմ բոլոր գործակիցները միանում են ինձ իմ այս պատգամի, շնորհավորանքների և գալիք տարիների համար իմ ամենաբարի մաղթանքների մեջ:

Անկեղծորեն Ձեր՝

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈԼԻՆ ԿՈՔՍ

Լոնդոն, Լորդերի պալատ, 20 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Երևանում Միացյալ Նահանգների դեսպանատան իմ պաշտոնակիցների կողմից հղում եմ ջերմ շնորհավորանքներ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ: Ինձ համար հատուկ պատիվ է ներ-

կայացնել Միացյալ Նահանգները Հայաստանում այս պատմական պահին, երբ աշխարհի չորս կողմերից եկած պատգամավորները հավաքվել են Ս. Էջմիածնում, ազատ և անկախ Հայաստանում՝ ընտրելու հայության 131-րդ Կաթողիկոսին:

Իմ աղոթքները Ձեզ հետ են այս պահին, երբ Դուք երկյուղածությամբ ստանձնում եք նոր պատասխանատու պաշտոն՝ առաջնորդելու համար Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռը նոր հազարամյակում:

Անկեղծորեն՝

ՀԱՐԻ ԳԻԼՄՈՐ
ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Երևան, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սբ. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մեծ պատիվ եմ համարում հղելու Ձեզ իմ ջերմագին շնորհավորանքները Ամենայն Հայոց Հայրապետության գահին Ձեր ընտրման առթիվ:

Ցանկանում եմ հղել նաև Ձերդ Սրբությանը սրտագին մաղթանքներ Ձեր բարձր առաքելության հաջողության համար:

Ընդունեցեք, Ձերդ Սրբություն, իմ խորին հարգանաց հավաստիքը:

ՅԱԿՈԲՈՍ Ժ. ՍՊԵՑԻՈՍ
ՀՀ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Երևան, 5 ապրիլի 1995 թ.